

ԻՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՅԼՈՅ ՎԱՍՏԱԿԸ

Ա. Կ ա մ ա յ ա յ ա ս ա խ ա ն.

«Խիստ է քեզ ընդդէմ խնանի արացել»
(Գործոց Թ. 5).

(Նարունակութիւն)

Հայր Սիօն վարդապետի յօդուածը այսպէս ամենայն բարեխղճութեամբ վերլուծելով գնահատելուց յետոյ, այժմ յառաջ բերեմ ճիշտ նոյն հարցերի մասին 10 տարի առաջ իմ գրած ու հրատարակածը. որից հ. Սիօնը եւ օգտուել է, եւ յեղաշրջել է եւ իւրացրել, որպէսզի Արարատի ընթերցողներն հնարաւորութիւն տրուի երկու կողմերին ևս լրիւ լսած լինելուց յետոյ՝ չափել, որակել և արդարութեամբ դատել հ. Սիօն վարդապետի վարժուները: Թողնենք՝ որ Արարատի ընթերցող շատ շատերը ուսանելու բաներ ևս կը գտնեն իմ այն գրածում:

ԽՈՐԵՆԱՅԻՆ ԽՈՐԵՆԱՅԻ ՊԵՏՔ Է ՀԱՅԱՆԱԼ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Ա

Ճանաչուած չե խորենացու մեկենասը:—«Խորենացի» անուան ծագումը:

Այս առաջին հատուածում (գլուխ) պիտի կարծիք յայտնեմ «Խորենացւոյ» (Խորենացի) բառիս ծագման և նշանակութեան մասին, որով ճանաչուում և կոչուում է Մովսէս մեր ազգային Պատմահայրը: Սակայն որովհետև նորա մեկենաս Սահակ Բագրատունին ևս անբաժան յիշուած է նամակի (Խորենացու) խորագրում¹, և որոյ ո՛վ

1. «Մովսիսի Խորենացւոյ յաղագս մերոյս յիսկըքանն յայսմ բանիցս Սահակայ Բագրատունւոյ խնդալ» (Խոր. ա. Ա. եր 1),

լինելը փոքր խնդիր չէ, ուստի ի դէպ՝ նախ վերադառնամ այս վերջնոյն:

Ճարադրութեանս ա. հատորի Ա. հատուածում (եր. 4), «Խորենացու մեկեմասը» խորագրի տակ, հերքելով

.....

Դառնամ այժմ առաջին խնդրին, — «Խորենացի» բառի ծագման և նշանակութեանը. —

Մովսէս մեր ազգային Պատմահայրը ծնուած է, առում են, Մշոյ շրջակայքում (յարեւմտից) դանուող Խորնի կամ Խորոնք անուն գիւղում: Այս ընդհանուր համոզումն կազմուել է այն հիման վերայ՝ որ այդ անուններն (գիւղի) են միայն որ քիչուշատ յարմարութիւն են ընծայում Խորենացի («Խորենացւոյ») ածանց ձևին, ինչպէս կայ այդ մեր Պատմահօր նամակի վերնագրում ¹:

Ամենից հին յիշատակութիւնը այդ գիւղի անունն դանում ենք Ջենոր Գլակի պատմութեան մէջ: Ջենոր՝ Ս. Լուսաւորչի կարգած առաջին վանահայրն էր Մշոյ ս. Կարապետի վանքի, իսկ Խորնի գիւղն այդ վանքին — դեռ ևս կռատուն եղած ժամանակից — սեպհականութիւն էր ²: Ուրեմն Ջենորայ վկայութիւնը, գիւղի անունն իսկութեան մասին, խնդրի ամենից կարեւոր կէտն է: Ջենորայ պատմութեան ձեռագիրներում այդ գիւղի անունը երեք վարիանտ ունի, — Խորնի, Խոհրնի և Խրտնի ³: Ջենորին, ինչպէս և այլ հիներին՝ յայտնի չէին Խորոնք և Խորէնք ձևերը, զոր այժմեան գիտնականները — Հ. Ղ. Ալիշան և այլք տալիս են, ընթերցող, որպէս զի դորանցից «Խորենացի» ածանցի ստացուիլը կանոնաւոր դարձնեն ⁴: Խնդիրն այս դրութեան մէջ, ես այլ կարծիք եմ տածում. ըստ իս՝ գիւղի անունն յառաջ բերուած վարիանտների և ոչ մէ-

1. «Տարօնոյ Խորնի կամ Խորոնք գիւղը ծնած է Մովսէս եւ այն պատճառաւ Խորենացի կոչուած» (Ջարք. «Հայկական հին դպ. պատմ.» եր. 350):

2. «Եւ երկոտասան դաստակերտս ետ (ս. Լուս.) նմա (վանքին) ... յորոց մին կուառս... եւ Մուշ եւ Խորնի եւ Կեղք» (Ջեն. եր. 37):

3. Տես Ինճ. «Ստոր. հին Հայաստ.» եր. 106:

4. Տես «Խոր. Հ. պատմ. աշխ. Թարգմ.» Խորէն եպս. Ստեփ. առաջ. էջ ԻԲ—ԻԳ:

կից չէ կազմուել «Խորենացի» ածանցը՝ որով ինքն իրեն մահանուանել է մեր Պատմահայրը և որը իսկապէս խնդիր է:

Խորենացու պատմութեան լատ. թարգմանող Վիստոնեան եղբայրները «Կղեսուրն ամենայն (Խոր. Բ. Է. Էր. 116) թարգմանել են Գիլիսիրիա (յունարէն), որ նշանակում է Խորին Ասորիք¹: Հոգելոյս Հ. Ղ. Ինճիճեանը այդ թարգմանութեան հաւան է, և պնդում է Սէն Մարտէնի դէմ՝ որը սխալ էր դռնում Վիստոնեանց այդպէս թարգմանելը և ինքը թարգմանում (Կղեսուրը) կապան, կիրճ, լեռնային նեղ անցք՝ ըստ Պրոկոպիոսի յիշած Գլիսուր-ի և Թովմ. Արծրունու (ա. դպ. ԺԱ.) լեսուր-ի:—Գիլիսիրիան—Խորին Ասորիք ցոյց են տալի Լիբանանի և Լիբանանների դօտումէջ ընկած ցածուն զիրքով մի փոքր աշխարհ, ոմանք էլ հասկանում են Ասորիք²:

Ալիշանը («Այրարատ», Էր. 535) Կղեսուրը կամ Կլեսուրը հասկանում է կապան, կիրճ, որպէս Սէն Մարտէնը:—Նորայր Բիւզանդացին ևս Կղեսուրը (յուն. Կլիսորիա կամ Կլիսուրիա) հասկանում է կապան, կիրճ, լեռնային Գաւառ՝ տարբերելով Կիլի Սիւրիա-ից, որը նշանակում է Խոր կամ Խորին Ասորիք³:

Նայելով Ինճիճեանի պատճառաբանութիւններին՝ իրաւունքը նորանն են համարում, իսկ բառական նշանակութեանը և որ Կղեսուրը կապան, կիրճ նշանակութեամբ յաճախ է պատահում՝—ընդհակառակը: Բայց իմ նպատակը չէ այստեղ այդ վէճի դատաւոր դուրս գալ, այլ այն՝ որ եկեղեցու արժանաւոր հայրերից մին, Խորենացուց առաջ, այն աշխարհի անունով կոչուած է եփրեմ Խորին ասորի, շատ անգամ էլ պարզ, եփրեմ Խորին, այսինքն՝ Խորին

1. «Աբսերդիսն զԵգիպտոս եւ զԿոզմանս Խոր Ասորւոց կալեալ շահէր. յորմէ եւ Սարգանապաղղոսն էր» (Եւսեբ. Քրոն. Էր. 54).—«Առ զշալասլ. եւ այս եղեւ սկիզբն առնլոյ քաղաքին ի Խորին Ասորւոց» («Ժամ. Միխայ. Պատր. Ասոր.», Երուս. 1870. Էր. 403).

2. Ինճ. «Ստոր. հին Հայաստ» Էր. 86—87, 530—532. եւ «Հնախ. Հայաստ.», ա. հատ. Էր. 379—382.

3. Տես «Տեղեկ. ի գիրս պատմ. Ասոր.», Էր. 36—37. եւ «Կորիւն վարդ. եւ Նորին թարգմանութիւնք», Էր. 403—404.

Ասորիքից¹։ Ընթերցողն արդէն հասկանում է՝ որ կամե-
նում եմ իսկոյն վրաբերել թէ մեր Պատմահայրն ևս,
թերեւս նորան հետեւելով, այդպիսի մականունն ընտրեց
ինքն իւր համար. չէ՞ որ Հայաստանն էլ ունէր իւր Խորին
Հայրը...

Խորենացին գրում է. «երթեալ իջանէ (Արմենակ) ի խո-
րին դաշտավայրի մի...»։—«Յայսմ խորութեան դաշտի բնակեալ
Արմենակ» (ա. ժ. Եր. 39, 40)։ Այս խորին, խոր դաշ-
տավայրն էր Մասիսի և Արագածի հովիտը՝ Արաղի միջին
հոսանքի վերայ, նախաքաղաք Արմաւրի խանձարուրը, Ա-
րայի դաշտը։ Եւ միայն Խորենացին չէ, որ այս դաշտին
խոր, խորին գիտէ։—Ազաթանգեղոսը գրում է. «եկին իջին
յԱյրարատ դաւառ ի Վաղարշապատ քաղաք» (Թիֆլիս, 1882,
Եր. 80)։—Փաւստոս Բուզանդը. «իջանէր (Վաչէ) ի դաշտն
Այրարատեան դաւառին» (Ս. Պետերբուրգ, 1883, Եր. 15)։—
Սեբէոսը. «Արամանեակ... երթեալ իջանէ յերկեր մի խորին
դաշտավայր» (Ս. Պետեր. 1879, ա. դպ. Եր. 5)։—Թովմ. Արծ.
«Հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քա-
ղաքին Դվնայ» (Վ. պօլիս, 1852. դ. դպ. Ը. Եր. 193)։—Դար-
ձեալ նոյն թովման. «Աբաս որդին Սմբատայ, ... գայ իջանէ
ի դաշտն Վաղարշապատայ» (դ. դպ. Թ. Եր. 337)։ Ոչ մի տա-
րակոյս չը կայ, որ այս օրինակների մէջ ևս իջին, իջանէր,
իջանէ՝ նոյնպէս Այրարատ դաշտի խորութիւնն են ականաբ-
հում ի հարկէ։

Ոչ միայն այս, կան հաստատ վկայութիւններ ևս՝ որ
Խորենացու ժամանակ, առաջ և յետոյ, Հայաստանում և
բացառապէս Արայի դաշտի սահմանները կոչւում էին
Խոր, Խորին Հայր։ Մի քանի օրինակներ.—

«Պատմէ Եւնաբիոս, որ եկաց ի չորրորդ դարուն, ի վարս
փիլիսոփայից՝ թէ ոմն ծնեալ ի Խորին Հայս... անուանեալ
Բռօէրէսիոս՝ դասասու ճարտասանութեան լեալ յԱթէնս,
այնչափ հռչակաւոր գտեալ՝ մինչև ի Հռովմ կանգնել զար-
ձան նորա, անուն տալով նմա թագաւոր ճարտասանութեան»

1. Մեր մատենագրութեան մէջ պատահում է շատ անգամ (Եփրեմ)
Խորի կամ Խորին ձեւով, այդպէս էլ գործ է ածել Մ. Աբեղեանը.
«Եփրեմ Խորին Ասորու» (Արարատ 1899 Յունվ. Եր. 36—37), որ սխալ
է ի հարկէ, տես Նորայրի սրբագրութիւնը։

(Ինճ. «Հնախ. Հայաստ.» դ. հատ. եր. 80):—«Ե ձեռն կրօնաւորի միոջ գտեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, Ե դաւառէն որ կոչի Զորոյգետ, Ե համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ» («Հայկ. հին դպր. պատմ.», Վեն. 1897, եր. 384)¹:—«մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի՝ Խորին աշխարհի Հայոց, որ է Աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի» (Մատթ. Ուռհ., Վաղարշապատ, 1898, եր. 230):—«Խորին Հայկ. Ե թուղթն դաշանց, յճը, այսպէս կոչի կողմն Վաղարշապատ: Սմին նման և առ Խորենացւոյն, ք. 14, «Զմտաւ ածեալ զի մի Ե Խորագոյն Հայս վարիցին»: Առ Մատթէի Ուռհայեցւոյ Ե թիւն ԾԾԴ. «Հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի Խորին աշխարհն Հայոց». Իմն զայն երկերս Հայաստանեաց յորս Աղուանք տիրէին՝ և Ե ժամանակս Եւր (Մատ. Ուռհ.) դուցէ յոմանց այսպէս անուանէին» (Ինճ. «Հնախ. Հայաստ.», ա. հատ. եր. 10):—«Իսկ զկողմանս Տայոց սահմանօք Եւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայկ անուանէ (Մօրիկ) և զկողմն Դուին քաղաքն՝ Ներսագոյն Հայկ» (Յովհ. Կաթ.):

Ինչ պէտք է աւելի օրինակներ կուտակելու, Հայաստան երկրի կեդրոն որ և Միջնաշխարհ Այրարատ դաւառը կոչուել է Խորին Հայք:

Արդ, խորհրդածել ևս կարող ենք: Այն երջանիկ ժամանակներում, երբ Հայոց Թադաւորը, հայրապետը, աւագանին և հոգեւորականութիւնը միախորհուրդ տքնում, յղանում և երկնում էին Հայութեան մի նոր վերածնունդ — հայկական գիր և դպրութիւն ծաղկեցնել: Երբ ս. Մեսրոպը հայկական տառերը լրացրած վերադառնում էր՝ Թադաւորը և հայրապետը ուրախացած ելնում էին ընդ առաջ. այդ ժամանակ մայրաքաղաք Վաղարշապատը, այնքան հոգսերի և ջանքերի այդ խառնարանը՝ ուր «Ե կողմանց և Ե դաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և դըրդեալք հասանէին Ե բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ. քանզի յԱյրարատեան դաւառին Ե կայս Թադաւորացն և քահանայապետիցն՝ բղխեցին Հայոց շնորք» (Վորիւն), ինքը

1. Ինճիճեանը իսկական Զորոյգետը համարում է Շիրակայ Անին՝ Իւր շրջակայքով: Զորոյգետի Թադաւորութիւնը՝ Անույ Թադաւորութիւն. Զորոյգետացիք՝ Անեցիք: Հակառակ չէ թէ այլ տեղեր եւս նմանութեամբ կոչուել են Զորոյգետ (Ինճ. «Հնախ. Հայաստ.» ք. հատ. եր. 64. եւ «Ստոր. հին Հայաստ.» եր. 416—417):

—այդ մայրաքաղաքը մ'նայ անտարբեր, երիտասարդք, պատանիք և տղայք և ծնողք չէին ոգևորւում ջեռնւում և ոչ մին դոնէ չը նախանձեց զիւղերից, աննշան տներից, հեռու անկիւններից վազող խմբուող տրեխաւորներին՝ որ մտնէր և փայլէր մեր Ոսկեդարեան Փարոսների շարքերում:

Քաղցր է ինձ հաւանիլ՝ որ Խորին Հայքից, Թերևս հէնց Խորին Հայքի կեդրոնից, ծագած լինէր Մովսէս Խորին(ացին), ամենից փայլուն մեր առաջնորդ Մոզուց աստղը...¹:

ա) Մովսէս Խորենացու մեկենասը չէ և՛ ո՛չ մարդպան Սահակ Բագրատունին:

բ) «Խորենացի» բառը ծագած պիտի լինի իմ դիտել տուած Խորին բառիցը (եր. 1—2, 5—12):

Վերջացնելով տկամայ պատասխանս, խոնարհաբար խընդրում եմ «Արարատի» խմբագրութիւնից՝ ուրիշ անգամ չդնել ինձ իմ վերծանութիւնների և բացատրութիւնների յեղաշրջման և իւրացման առիթներով պատասխանելու հարկի մէջ:

Բարդ. Կախի. Գեօրգեան.

1. Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագիր Խորենացիներից երկուսը միայն № 1672 եւ 1035 ունին «Մովսէսի Խորինացւոյ» ընթերցուածք. թէպէտ № 1672 ա. գրքի գլխակարգութեան (ցանկ) սկզբում ունի ըստ սովորականին՝ «Ասացեալ Մովսէսի Խորենացւոյ»... Պետք է իմանալ որ ձեռագիրներից շատերի առաջին գլխի—նամակի վերնագրի տեղը պարասէ են թողուած. երեւի թէ յետոյ զարդագրերով գրելու համար: